


Կ Ի Ն Ե Լ Ի Կ



# ՓՈՍՏԷ

«ԽՈՐԱՐՆ»  
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ



# ՄԱՄՈՂԱԿ




*Հեղաբնույթ՝ Փ. Լեվկույի*

Թարգմանությունը՝ Ռուբեն Թարումեանի

«ԴԵՏԱԿԱՅՍ, ԼԻՏԵՐԱՏՈՒՐԱ» Մոսկվա 1968

«ԽՈՐԱՆ» Երևան 1994







Բորիս Փիսկովին

1

Ո՞վ է թակում դուռը իմ՝  
Պայուսակը աչ ուսին,  
5 համարը սեւ գոտուն,  
Համազգեստով կապտավուն:  
Ո՞վ է նա,  
Ո՞վ է նա:  
Փոստատարն է, պարզ է, նա:

Պայուսակում  
Այսօր շատ կան  
Նամակներ.  
Տոմսկից,  
Եւ Տաշքենտից,  
Տագանրոգից,  
Տամբովից,  
Բաքվից:

Յոթին գործը նա սկսեց,  
Տասին բեռը իր կիսվեց,  
Իսկ արդեն տասներկուսին  
Ավարտեց ամբողջովին:



3



2

— Ստացե՛ք պատվիրված ծրար՝  
Տիար Ժիտկովի համար:  
— Այդ տիարը, սիրելի՛ս,  
Զի լինելու մեկ ամիս:




— Ինչպե՛ս գտնենք Ժիտկովին:  
— Նա երեկ մեկնեց Բեռլին:

3

Ժիտկովը թռչում է  
Օդով, սլանում է,  
Երկիրն է սահում ներքեւում,  
Եւ նուրբ հետագիծը:  
Նրա հետեւից էլ  
Գնացքը նամակն է տանում:








Բոլոր փաթեթները  
Ունեն ճիշտ տեղերը  
Հատուկ փոստային վագոնում,  
Եւ երկու փոստատար  
Շուրջ գիշերն անդադար  
Ծանրոցներ, նամակներ են դարսում:

... Բացիկը՝  
Վարշավա,







Ծանրոցը՝  
Օտտավա,

Այս թերթը՝  
Դեպի Սախալին:

Նամակը՝  
Կարրարա:

Ահա եւ ծրարը,  
Որ ուղևորվում է Բեռլին:





4

Բեռլինի փոստատարն է քայլում,  
Լրագրերն է վերջին տարածում:  
Այնքան պճնամոլն է, գիտե՞ք.  
Գլխարկին՝ կարմրավուն եզրաշերտ,

Մուգ կապույտ բաճկոնի վերելում  
Վրակարն է կանաչ շողշողում:  
Իր ձեռքում նա պահում է բարակ,  
Ալլերկրյա ծրարով մի նամակ:

Չորս կողմում անցորդներ են շտապում  
Եւ ինքնաշարժներ են խշշում՝  
Մեկ-մեկու վազանցում են արագ՝  
Շարժվելով ծառուղու ստվերի տակ:

Փոստատարը մոտենում է  
Հյուրանոցի դռներին  
Ու դռնապանին ասում է,  
— Նամակ տիար ժիտկովին:

Բայց հնչում է պատասխան.  
— Լոնդոն մեկնեց նա սակայն:









5

Նամակն  
 Ինքն իրեն  
 Ոչ մի տեղ չի գնա,  
 Բայց թե նրան արկղ գցես,  
 Նա կվազի,  
 Կթռչի,  
 Կլողա,  
 Կանցնի նա հազար ու մի վերստ:

Նամակին դժվար չէ  
 Աշխարհը տեսնել.  
 Տոմսի կարիք նա չունի:  
 Սոսնձված  
 Ուղեւորը  
 Պղինձ դրամով  
 Տարբեր երկրներ կանցնի:







Ճամփին  
Ոչ ուտում է նա,  
Ոչ էլ խմում,  
Մի բան է միայն  
Անդադար կրկնում.  
— Շտապ հանձնե՛ք՝  
Անգլիա,  
Լոնդոն,  
Վեստ,  
Բոբկին փողոց,  
Չորրորդ շենք:

Աջ ու ձախ շտապում, շարժվում են  
 Գույնզգույն ինքնաշարժներ,  
 Վերեւներում տատանվում են  
 Պաստառներ ու գովազդներ:

Բարձր է վարորդի խիստ ձայնը.  
 — Բոբկին-սթրիթ. վերջին կանգառն է:

Իսկ Բոբկին փողոցով, արագ,  
 Գլխին դրած կապույտ գլխարկ,  
 Քայլում է Սմիթը փոստատար՝  
 Լուրդ ու չոփի պես նիհար:











Գտնում է շենքը նա շորրորդ,  
Քակում է դուռը մուրճիկով:  
Հանձնում է նա դռնապանին  
Այն նույն նամակը՝ ժխտկովին:


Բայց նայելով այդ ազգանվանը՝  
Պատասխանում է դռնապանը.  
— Բորիս ժխտկովը, ներեցե՛ք,  
Բրազիլիա մեկնեց երեկ:




7

Շոգենավը  
Կշարժվի  
Երկու բոպեից:  
Տեղ չկա էլ խուցերում  
Տարբեր բեռներից:

Սակայն  
Խուցերից մեկում  
Ճամպրուկներ չեն տեղադրում:  
Այնտեղ կլինեն միայն  
Փոստն ու փոստատարն:








Բրազիլիա, Բրազիլիա.  
Սպիտակ արեւ ու շոգ:  
Ծեր փոստատար Բազիլիոն  
Անցնում է փողոցով,

Ջեռքին՝ տարօրինակ տեսքի  
Ու ճմրթված նամակ,  
Նամականիշն՝ օտարերկրյա  
Եւ անձանոթ դրոշմակ:

Իսկ ազգանվան կողքին, ահա՛  
Մի փոքր գրություն.  
Հասցեատերն մեկ օր առաջ  
Վերադարձել է տուն:



Ո՞վ է թակում դուռը իմ  
Պայուսակը աջ ուսին,  
5 համարը սեւ գոտուն,  
Համազգեստով կապտավուն:  
Ո՞վ է նա,  
Ո՞վ է նա:  
Փոստատարն է, պարզ է, նա:

Ու մեկնում է նա կրկին  
Այն նամակը՝ ժխտկովին:

— Ժխտկովին:  
Բորիս, արի՛,  
Ստացիր եւ ստորագրի՛:



## 10

Վեր թռավ իմ հարեւանը.  
— Դու մի տե՛ս՝ ինչ հրաշք բան է.  
Այս նամակն իմ հետքերով  
Երկրագունդն անցավ բոլոր:

Ծովերով այն սլացավ,  
Ամազոն մինչեւ հասավ:  
Նավերով, գնացքներով  
Նա շարժվեց իմ հետքերով:

Սար ու ձորեր, ծովեր կտրած՝  
Հասավ նամակն ինձ կրկին:  
Փա՛ռք ու պատիվ փոշոտ, հոգնած  
Փոստատարներին մեր տանջված:

Փա՛ռք փոստատար ազնիվ մարդկանց՝  
Ծանր բեռը ուսերին:





